ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Digitally signed by MARDANYAN ANNA 7302870411
Date: 2022.10.10 13:54:47 AMT

Տնօրեն՝ Ա. Մարդանյան

« »..... 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Տավուշի մարզի

Նավուրի միջնակարգ դպրոց____7-րդ

ուսումնական հաստատության անվանումը՝ դասարան

Բաղալյան Մարիետա Լևոնի

դասղեկի ազգանունը՝ անունը՝ հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ- ԴԱՍՏԻՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) VII դասարանում սովորում է 11 աշակերտ՝ 5 աղջիկ և 6 տղա: Աշակերտները ցուցաբերել են տարբեր կարողություններ, ընդունակություններ ու հմտություններ: Աշխատում եմ աշակերտների մոտ ձևավորել լսելու և հասկանալու կարողություն, ստեղծել համերաշխ, կարգապահ կոլեկտիվ, ինչպես նաև ստեղծել պատրաստակամություն ուսումնական պրոցեսում առաջացած դժվարությունները հաղթահարելու համար:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կիրառել բոլոր մեթոդներն ու հնարները աշակերտների մեջ սերմանելու, մշակելու և զարգացնելու սեր ուսման, դպրոցի, դպրոցական կարգ ու կանոնի նկատմամբ:
Աշխատանք տանել ուսման որակը բարձրացնելու, անհարգելի բացակայությունները կանխելու, ուշացումները վերացնելու ուղղությամբ, ինչպես նաև խնամքով վերաբերվեն դպրոցական գույքին:
Հետևողական լինել դասարանում աշակերտների ճիշտ պահվածքին:
Անցկացնել ծնողական ժողովներ՝ ուշադրություն դարձնելով խնդրահարույց հարցերին:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակությունը կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այն նպատակ ունի բարոյական արժեքներ սերմանելու: Այդ իսկ պատճառով աշակերտներին պետք է գաղափար տալ քրիստոնեության մասին: Անցկացնել զրույցներ, կազմակերպել այցեր եկեղեցի:
Գեղագիտական դաստիարակությունը սերն ու հարգանքն է գեղեցիկի նկատմամբ: Մարդը դեռ վաղ հասակից սկսում է գնահատել իր շրջապատը և շրջապատող միջավայրն իր բոլոր դրսևորումներով: Գեղագիտական դաստիարակությունը կազմում է մի մասը մարդու ընդհանուր զարգացման:
Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը գրագետ, հոգեպես ու ֆիզիկապես կախված, բանակի մասին տեղեկացված սերունդ դաստիարակելու գործընթաց է: Մեր առաջնահերթ խնդիրն է աշակերտների մոտ ձևավորել ռազմահայրենասիրական ոգի:
Ֆիզիկական դաստիարակությունը ուղղված է առողջության ամրապնդմանն ու պահպանմանը,մարդու մտավոր և ֆիզիկական կարողությունների զարգացմանը: Այն իրենից ներկայացնում է մշակույթի մի մաս, որն ընդգրկում է մի շարք արժեքների և գիտելիքների համադրում:
Աշխատանքային դաստիարակությունը Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա, որ միայն ազնիվ աշխատանքով կարող է վաստակել հանապազօրյա հացը: Աշակերտները պետք է պատրաստ լինեն հանրօգուտ աշխատանքի: Տանը, դպրոցում և ամենուր պետք է պահպանեն մաքրություն:
Բնապահպանական դաստիարակությունը ոչ միայն գիտելիքների ձևավորման է, այլ նաև գործնական կարողությունների զարգացումն է: Աշակերտներին պետք է զինել բնության պահպանության վերաբերյալ գիտելիքներով: Ձևավորել բնության հանդեպ

հոգատար վերաբերմունք:
4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ Ամուր հիմքերի վրա դնել դպրոց-ընտանիք կապը ստեղծելով ամուր կապ ծնող-աշակերտ-ուսուցիչ հարաբերությունների միջև: Մասնակցել ծնողկոմիտեի հետ տարվող աշխատանքներին: Հրավիրել ծնողական ժողովներ քննարկել ընթացիկ հարցեր: Եթե դպրոցն ու ծնողները համագործակցում են, ապա աշխատանքն արդյունավետ է: Ոգևորել դասարանի աշխատանքներին մասնակցող ծնողներին, հաշվի առնել նրանց նախաձեռնությունները:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	**Ուսումնադասիարակչական աշխատանքների բովանդակությունը**	**Կատարման ժամկետը**	**Կատարողներ**
	ա) Գիտելիքի և դպրության օր բ) դասարանի ակտիվ ընտրությունգ) հերթապահության կազմում	1.09-2.09	դասղեկ
1-ին	ա) Անցկացնել ծնողական ժողով բ) Կնքել դասագրքերի հատկացման պայմանագիրը գ) Կատարվելիք աշխատանքների նախագծում, հաշվի առնելով երեխաների առաջարկները՝ թեմաները: գ) դ.ժ- Երկարօրյա դասընթացի կազմակերպումը	5.09-9.09	դասղեկ ծնողներ
2-րդ	Ծանոթացում տարհանման կանոններին: Դասարանի սանիտարահիգենիկ վիճակի ստուգում:	12.09-16.09	դասղեկ զինղեկ
3-րդ	Զրույց ՀՀ անկախության 31-ամյակի վերաբերյալ	19.09-23.09	դասղեկ
4-րդ	Հայաստանի զինանշանը, դրոշը և օրհներգը	26.09-30.09	դասղեկ
5-րդ	<<Շնորհավոր տոնդ ուսուցիչ>>	3.10-7.10	դասղեկ
6-րդ	Իմ հայրենիքի պատմության էջերից.	10.10-14.10	դասղեկ
7-րդ	Աշխատասիրություն և պատասխանատվություն	17.10-21.10	դասղեկ
8-րդ	Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում:	31.10-4.11	դասղեկ ԴԱԿ
9-րդ	Պահպանենք վարվեցողության կանոնները	7.11-11.11	դասղեկ
10-րդ	ա)Համակարգչից օգտվելու անվտանգությունը բ)Ապահով համացանց	14.11-18.11	դասղեկ
11-րդ	Զրույց <<Բնական աղետներ>> թեմայով	21.11-25.11	դասղեկ զինղեկ
12-րդ	ա)Հիշենք 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը: բ)Հարգենք անմեղ զոհերի հիշատակ:	28.11-2.12	դասղեկ ԴԱԿ
13-րդ	ա)Երաժշտությունը իմ կյանքում բ)Քո առողջությունը	5.12-9.12	դասղեկ

	գ)Անձնական հիգիենա		
14-րդ	ա)Ծնողական ժողովի անցկացում բ)Դասագրքերի ստուգում	12.12-16.12	դասղեկ գրադարանավար
15-րդ	Ամանորը սպասված տոն է	19.12-23.12	ծնողներ,աշակերտ-ներ
16-րդ	<<Պոլիէթիլենային տոպրակներն ու շրջակա միջավայրը>>	9.01-13.01	դասղեկ ԴԱԿ
17-րդ	Էկոլոգիական հիմնախնդիրներ: Հավաքել տեղեկատվություններ ՀՀ-ի առավել ուշագրավ էկոլոգիական համակարգի հիմնախնդիրներից:	16.01-20.01	դասղեկ աշակերտներ
18-րդ	<<Մեր հզոր հայկական բանակ>> զրույց	23.01-27.01	դասղեկ
19-րդ	<<Մերօրյա հերոսները>> զրույց հանձնարարություն աշակերտներին	30.01-3.02	դասղեկ
20-րդ	<<Հայկական ավանդույթներ՝ Բարիկենդան, Տրնդեզ,...>>	6.02-10.02	դասղեկ ԴԱԿ
21-րդ	Թումանյանական ընթերցումներ	13.02-17.02	դասղեկ գրադարանավար
22-րդ	<<Բարեկամներ և թշնամիներ>> զրույց	20.02-24.02	դասղեկ
23-րդ	Նախապատրաստվել մարտի 8-ի նվիրված միջոցառման	27.02-3.03	դասղեկ
24-րդ	<<Շնորհավոր տոնդ,սիրելի՝մայրիկ>>	6.03-10.03	դասղեկ ծնողներ
25-րդ	<<Ով է իսկական ընկերը>>	13.03-17.03	դասղեկ
26-րդ	<<Գարնանային զբոսանք և մտորումներ>>	20.03-24.03	դասղեկ աշակերտներ
27-րդ	<<Շնորհավոր մայրության և գեղեցկության տոն>>	3.04-7.04	դասղեկ ծնողներ աշակերտներ
28-րդ	Քննարկում <<Արտագաղթը չարիք է>>	10.04-14.04	դասղեկ
29-րդ	<<Սուրբ հարության տոն>>	17.04-21.04	դասղեկ ԴԱԿ
30-րդ	<<Ինչպիսի երկրում կուզենայի ապրել>> Համապետական շաբաթօրյակների նշանակությունը. զրույց	24.04-28.04	դասղեկ
31-րդ	<<Մայիսյան տոներին ընդառաջ>>զրույց:	1.05-5.05	դասղեկ

32-րդ	<<ՀՀ-ի հարևան երկրները և սահմանները>>զրույց	8.05-12.05	դասղեկ աշակերտներ
33-րդ	Առաջադիմության ընթացիկ գնահատականների քննարկում	15.05-19.05	դասղեկ
34-րդ	Պատմամշակութային տեսարժան վայրերի դիտում, ծանոթացում, էքսկուրսիայի կազմակերպում:	22.05-26.05	դասղեկ ԴԱԿ ծնողներ աշակերտներ